ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 287

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

(ծածկագիրը՝ 1.2-16)

Վարչության պետը՝

ա) մշակում և Երևանի քաղաքապետին է ներկայացնում Երևանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերի նախագծերը, ինչպես նաև հաստատված ծրագրերում առաջարկվող փոփոխությունները՝ Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար.

բ) Երևանի քաղաքապետին է ներկայացնում Երևանի զարգացման ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ, Երևանի սոցիալ-տնտեսական վիճակի գնահատման, առկա ռեսուրսների, զարգացման հիմնական ուղղությունների ուսումնասիրման, տարածական պլանավորման, ենթակառուցվածքների ընդհանուր վիճակի վերաբերյալ վերլուծության և կանխատեսումների արդյունքները:

գ) մշակում և Երևանի քաղաքապետին է ներկայացնում Երևանի ներդրումային կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերի նախագծերը, ինչպես նաև հաստատված ծրագրերում առաջարկվող փոփոխությունները՝ Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնելու համար.

դ) Երևանի քաղաքապետին առաջարկներ է ներկայացնում Երևանում զարգացման և ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով վարկեր, փոխատվություններ, օրենքով սահմանված կարգով այլ փոխառու միջոցներ և դրամաշնորհներ ներգրավելու վերաբերյալ

ե) Երևանի քաղաքապետին առաջարկներ է ներկայացնում Երևանում գործարար միջավայրի բարելավման, համայնք–մասնավոր համագործակցության ակտիվացման և համատեղ ծրագրերի իրականացման վերաբերյալ.

զ) Երևանի քաղաքապետին առաջարկներ է ներկայացնում քաղաքային տնտեսության ծրագրերում օտարերկրյա ներդրողներ և միջազգային դոնոր կազմակերպություններ ներգրավելու վերաբերյալ.

է) համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների, միջազգային կազմակերպությունների, ֆինանսական կառույցների, գործարար ոլորտի ներկայացուցիչների, միջազգային և տեղական փորձագետների և խորհրդատուների, ինչպես նաև համապատասխան ոլորտների շահագրգիռ կազմակերպությունների և անհատների հետ:

ը) մասնակցում է Երևանի քաղաքապետարանի և օտարեկրյա կազմակերպությունների համատեղ ծրագրերի իրականացման աշխատանքներին, այդ թվում՝ դրամաշնորհային.

թ) ապահովում է միջազգային ներդրումային և այլ հաստատությունների կողմից ֆինանսավորվող նախագծերի մշակումը, համաձայնեցումը և իրագործման վերահսկումը.

ժ) կազմակերպում է արտասահմանյան կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական և այլ աջակցության ծրագրերը.

ժա) առաջարկ է ներկայացնում քաղաքային տնտեսության ոլորտներում կոնցեսիոն կառավարման ձևի ներդրման նպատակահարմարության վերաբերյալ՝ ելնելով անհրաժեշտությունից.

ժբ) ապահովում է միջազգային առաջատար փորձի, այդ թվում նաև գործընկեր քաղաքների հաջողված նախագծերի ուսումնասիրությունը՝ առաջարկներ ներկայացնելով քաղաքային տնտեսության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերում և նախագծերում դրանց կիրառման նպատակահարմարության վերաբերյալ,

ժգ) ապահովում է Երևանի տնտեսության և ներդրումային կարիքների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակման և հրապարակման աշխատանքները, արտասահմանյան և հայաստանյան գործարար հատվածների իրազեկումը՝ նպաստելով ներդրումային գրավչության բարձրացմանը.

ժդ) կազմում և Երևանի քաղաքապետին է ներկայացնում Երևանում տուրիզմի զարգացմանն ուղղված համապարփակ ծրագրեր, ներառյալ համապատասխան ինստիտուցիոնալ և ներդրումային միջավայրի կատարելագործմանն ուղղված առաջարկություններ և նախագծեր:

Վարչության պետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

Վարչության պետը՝

ա) ունի /042101.00.6 կամ 042101.00.7/ իրավագիտություն կամ /031101.00.6 կամ 031101.00.7/ տնտեսագիտություն մասնագիտություններով բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան (կոչում) կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

բ) ունի <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>>, <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

ե) տիրապետում է ռուսերենին և մեկ այլ օտար լեզվի (ազատ):

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի հուլիսի 13-ը, ժամը 10:00:
Դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request.am էլեկտրոնային հասցեին:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 010515133):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: